

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԵՕԹՆԵՐՈՐԳ ԳՐՈՐԻ ՍՎԻՋՐԸ

ՆՊԱՏԱՆ ԵՐ ՀԱՅՈՑ ՏՕՆԱՅՈՑՅԻ ՈՒՍՈՒՄՆԵՍԻՐՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն):

1. Յովհաննէս Մկրտչի տօնը մեր ցանկին մէջ առաջին տեղը կը գրաւէ իբրև Նախադուռն Հայոց Եկեղեցական տարւոյն: Ան կը կանխէ Վարդապետը: Մասնաւորապէս կը շեշտուի, թէ այս նախադարձութիւնը Ս. Գրիգորէն սահմանուած է. «Տօն սրբայն Յովհաննու Մկրտչին եւ վկայի, գոր նախակարգեաց առաքեալն եւ խոստովանողն Քրիստոսի եւ հայր վերստին նորոգման բոլոր Հայաստան աշխարհիս Գրիգորիս: <Ամենայն հասարակութիւն> ի վանս <երթիցեն>, զի ուխտագրութեան պահօք հաստատեցաւ: Եւ որ ինչ միանգամ այլ ուխտք են՝ ի վանս կատարեսցին. եւ շարաթք եւ պահք եւ ծոփք, զի ուխտից են կատարմունք. զի ուխտաւորեալ են բնակիչք՝ շնորհիւ ուխտին կերակրեսցին»¹:

Հին աւանդութիւնը կ'արձագանգէ հոս, որ նաեւ Փաւստոսի եւ Աղաթանգեղոսի քով լսելի է: Փաւստոս կը գրէ Գնելի պատմութեան մէջ. «Եւ էր բանակ թագաւորին (Արշակայ Բ.) ի Շահապիվանի»: Արշակ թագաւոր կ'ուզէր «զտօն Նաւասարդաց... անցուցանել» այն տեղ: Կը հրաւիրուի նաեւ Գնել սեպուհ: Գնել կը հասնի երբ «վաղիւն հասելոյ առաւօտուն օրն լուսանայր կիւրակէն. եւ յայնմ աւուր տօն զիպեցաւ յիշատակի Մեծին Յովհաննու, որ ի Գրիգորէ եւ ի Տրդատայ յաւանին Բագաւանին կարգեալ էր: Ապա յայնմ յիշատակի աշխարհաբնակք մարդկան անդը՝ ժողովեալ էին եւ բազում եպիսկոպոսք որ յայլոց գաւառաց: Եւ ապա մեծ եպիսկոպոսապետն Ներսէս փոխանակ իւր յղեաց զիւր աթոռակիցն զԹաղ եւ զիւր արքեպիսկոպոսն եպիսկոպոսին, որում անունն Մուրիկ³ կոչէր, զի երթիցեն եւ նորա <եւ> պէտք զինչ եւ իցեն՝ ընդ նորա վճարեսցեն: Եւ ինքն (Ներսէս) անդէն մնաց յարքունական բանակին, զի զնոյն հաղորդութիւնն եւ անդ կատարեսցէ (այս. կատարեսցեն): Եւ յայնմ գիշերի ցայգապաշտօն

մեծ եղև ի բանակին առ կաթողիկոսին» (Գ. 15): Ուրիշ տեղ Մանուէլ Մամիկոնեանի մասին խօսելով կը գրէ Փաւստոս. «Եւ էր բանակ Հայոց ի Բագաւանդ գաւառի ի Բագունան աւանի», Մանուէլ՝ «ամենայն Հայոց զնոյն տուեալ էր ժամ յորս երթալոյ»: Կը տեսնուին Մեհրուժանի լրտեսները: Մանուէլ կը փութայ համախմբել իր զուգը եւ «մտին առաջի սուրբ ոսկեբացն Յովհաննու, որ կայր յայնմ գեղջ (այս. դեղ) . ուխտաւոր լինէին եւ [ինդրէին յԱստուծոյ] զարգար դատաւորն՝ յօղնականութիւնն կոչէին՝ լինել նոցա օղնական» (Ե. 42): Իսկ տօնին հաստատութեան մասին կը պատմէ Աղաթանգեղոս, որ կը գտնուի Փաւստոսի ազդեցութեան տակ. Ս. Գրիգոր տուած հետը Ս. Յովհաննու եւ Աթանաղինէի նշխարները Տարօնէն կու գայ Բագունան քաղաքաբնակը. «Եւ զիշատակս վկայիցն բերելոց ժամագրեաց տօն մեծ հոգակել [յառաջագոյն կարծեալ սնոտեացն պաշտամանն] ի ժամանակի [դիցն] Ամանորայ ամենաբեր նորոց պողոց տօնից [հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղում պաշտէին] յուրախութեան Նաւասարդ աւուրց (այս. աւուր) . զի ժողովեալ <զտօն> յիշատակի մեծին⁵ Յովհաննու [եւ սուրբ վկային Աստուծոյ Աթանաղինի] յայնմ աւուր խմբեսցեն ի նմին յաւանի⁶: Այս աւանդութեան հետեւելով կը գրեն նաեւ Յայտմաւորքը, նոր մեկնաբանութեամբ. «Արդ պարտէ իմանալ եւ քննել, թէ զիարդ եկեղեցի Հայաստանեաց ի մուտս Նաւասարդի կատարին Յովհաննու Մկրտչի» զտօն. եւ յառաջ կը բերեն Շիրաք-Արտաւազդի ծանօթ զրոյցը. զոր կը վերջացնեն այսպէս. «Ապա օրէնք զբն յաղագս Հայոց, թէ ամենայն արուեստաւոր միանգամ աւելի բախել զարուեստն ի մուտն Նաւասարդի յաւելուած կապանացն Արտաւազդայ...: Չայն խափանելոյ ազգաւ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ կարգեաց յայնմ աւուր տօնել <զտօն> սուրբ Մարգարէին եւ Մկրտչին Յովհաննու»: Կըսուի զարձեալ թէ Ս. Գրիգոր «սահմանեաց ամ յամէ աշխարհածողով եւ թագաւորական տօն լինել, որ օր մուտ է Նաւասարդի ամսոյ ի Ա., որ է Աւգոստոսի ժԱ. եւ զի յայնմ

¹ Սոփերք հայկականք. Բ. էջ 110—111: ² Տպ. որ: ³ Հաւանօրէն պատահուած ձեւը Մարիկ (Mauricius), հռոմէական անուն. համաժամանակ: ⁴ Փաւստոս:

⁵ Յովհաննէս Մկրտչի «արգար դատաւոր» նկատուած: ⁶ Աղաթանգեղոս, Վաղարշապատ-Քիֆլիս 1909, էջ 619—620: ⁷ Տպ. ի յիշատակ մեծի Երանելոյն Յովհ.:

աւուր տօնէին Հայք ի կոստալաւոսութեանն՝ Արամազդայ եւ Անահայտայ եւ առաւօտեւարանէին վասն Արտաւազդայ»⁷:

Տօնին օրը Փաւստոս եւ Աղաթանգեղոս, նաեւ Յայտմաւորքը, միաբան կը մատնանեն Հայոց Նաւասարդի մուտքին: Յայտմաւորք Նաւասարդի 1 կը հաւասարակշռեն Աւգոստոսի 11ին: Տոմարագիտական հաշուով այս զուգակշռութիւնը կ'արժէ միայն 428—431 տարիներուն համար: Բայց Յայտմաւորքը նկատի ունի հոս Յովհաննէս Սարկաւազ վարդապետի (1085) հաւասարակշռութիւնը, որ կամայական է եւ չէ յեցած տոմարագիտական ո եւ է հիման վրայ:

Փաւստոսի այն տեղիքը, ուր կ'ըսուէր. «Վաղիւն հասելոյ առաւօտուն օրն լուսանայր կիւրակէն. եւ յայնմ աւուր տօն զիպեցաւ յիշատակի Յովհաննու, որ ի Գրիգորէ եւ ի Տրդատայ յաւանին Բագաւանին կարգեալ էր», ենթադրել կու տայ, թէ Յովհաննէս Մկրտչի յիշեալ տօնը որոշ օրուան կապուած անշարժ տօներէն էր, ինչպէս էր Յունուար 6ի Յայտնութեան տօնը, եւ այդ տօնը շարաթուան որ եւ է օր կարող էր դալ, այն տարւոյն «յայնմ աւուր» Կիրակի հանդիպած է:

Հայկական Տոմարի Նաւասարդ 1ը 228—346 տարիներուն կը հանդիպէր Սեպտ. 30—1 եւ 347—471՝ Աւգոստոս 31—1: Բայց ընթացիկ կեանքին մէջ «Նաւասարդաց աւուրք» նկատուած էին «աւուրք ամենաբեր նորոց պողոց»⁸. Ժամանակ որսորդութեան եւն. տօնակատարութիւնները ամառնային արեւադարձի հանդէսներու նկարագիրը կը կրէին: Հարկ է Բագաւազական-տոմարական տարիէ տարբեր տարեւուտ, ամառնոր որոնել, որ ըլլայ անշարժ, բնութեան ընթացքին պատշաճեցուած: Նորաբեր պողոց արմիսն է Յունիս, նորախայծ պտուղները հրապարակ կու գան նոյն ամսոյն վերջերը: Ընդ այս շրջանին դրացի եկեղեցիները կը տօնէին «յառաջամուտ», նախակարգապետ Յովհաննէս Մկրտչի Ծննդեան տօնը՝ շատ կանուխ ժամանակէ ի վեր. այդ տօնին օրն էր Յունիս 24:

Սուրբ Գրիգոր Կեսարիայէն ոչ թէ Յովհաննէս Մկրտչի «ոսկերք» կը բերէր, որոնք

⁷ Բ. 7 Յայտմաւորք Վիեննայի Միլիթ. Մատ. Տալեան, Յուլիան, էջ 25: ⁸ Կը կոչուէր նաեւ «Նորաբեր տօն». Յառաջաբան կանոնաց Շահապիվանի ժողովոյն, դուրմարուած 444ին:

զոյութիւն չունէին Կապապոլկիոյ մայրաքաղաքին մէջ, այլ Յովհաննէս Մկրտչի տօնը: Կը հաւաքէր Հայաստան վկայած Մարտիրոսներու նշխարները («ոսկերք»), կը կառուցանէր տեղիս տեղիս յանուն Յովհաննու վկայարաններ, կը զետեղէր այդ նշխարները անոնց մէջ եւ «տօն մեծ հոգակէր մեծին Յովհաննու Մկրտչին եւ վկային»: Այդ տօներէն մէկն է Յովհաննու Ծնունդը, Յունիս 24ին, «ի ժամանակի Ամանորայ ամենաբեր նորոց պողոց տօնից»: Կը պատմէ Գրիգոր Նիւսացի⁹, թէ Պոնտոսի առաքեալը Գրիգոր Աքանչեւագործ կը հաւաքէր նահատակուած վկայներու ոսկորները, կը շինէր անոնց վրայ մատուցներ եւ կը յորդորէր իր նորադարձ հաւատացեալները յարգել զանոնք տօներով եւ հանդէսներով: Առանց տարակուսի Նէոկեսարիացի առաքեալը Կեսարիայի եկեղեցւոյ սովորութեան հետեւած էր այս կէտին մէջ: Նոյնպէս Կեսարիայէն եկած էր իրմէ տասնեակ տարիներ յառաջ Հայաստանի համանուն առաքեալը, նոյնպիսի հրահանգներով զինուած:

Թէ Արեւելեան եւ թէ Արեւմտեան եկեղեցիները սովորութիւն ունէին տօնել Ս. Յովհաննու Ծնունդը հսկումով կամ Յայգապաշտօնով, շարաթապահքով, ծոմապահքով եւ ուխտագնացութիւններով: Փաւստոսի վերոյիշեալ տեղիքը ցոյց կու տայ շատ խօսուն արտայայտութեամբ, թէ նոյն յարխօսուն Հայաստան կը վկայէր Մեծն Յովհաննէս, Յունիս 24ին, Բագաւանի եկեղեցւոյն մէջ, ուր ժողոված էին աշխարհաբնակ մարդիկ եւ բարձրաթիւ եպիսկոպոսներ մօտաւոր եւ հեռաւոր գաւառներէն. նոյն պաշտօնը կը կատարուի նաեւ Բանակին մէջ ի Շահապիվան. «Եւ յայնմ զիշերի ցայգապաշտօն մեծ եղև» նախադասութեամբ կաթողիկոսին: Ուրիշ անգամ Հայ բանակայինք «ուխտաւոր լինէին» Բագաւանի եկեղեցին «եւ զարգար Դատաւորն (Յովհաննէս) յօղնականութիւն կոչէին՝ լինել նոցա այցելու օղնական» առաջիկայ պատերազմին մէջ:

Փաւստոս թէպէտ օրով ու ժամով ճշգրտած է Գնելի սպանման ժամանակը, բայց չէ յայտնած մեղի տարին, երբ պատահած է այդ եղեւնը: Իմ նորագոյն քննութիւններու համաձայն դէպքը պատահած ըլլալու է Գ. դարուն առաջին տասնեակին, երբ Արշակ Բ.

⁹ Վարք Ս. Գրիգորի Աքանչեւագործի:

(297—339) էր Հայոց թագաւորը: Տիրելի էր Գնեւ սեպուհները պատանդութենէ վերադարձան հաւանորէն 310ին. Գնեւի ամուսնութիւնը Անդովկ Սիւնոյ դստեր փարանձեմի հետ տեղի ունեցաւ հաւանորէն 311ի սկիզբը: Գնեւ սպանուեցաւ Յունիս 24 կիրակի լուսարացին: 290—370 տարիներուն Յունիս 24 կիրակի կը հանդիպի հետեւեալ տարիներուն:

294. 305. 311. 316. 322. 333. 339. 344. 350. 361. 367.

Ուստի 311 ճշդիւ կը համաձայնի Փաւստոսի ժամանակագրութեան:

Արշակ Բ. երբ թագ կապեց, տակաւին երիտասարդական հասակին մէջ էր: 311ին Գնեւ, իր եղբորորդին, տարեքով իրմէ շատ մեծ ըլլալու չէր: Եւ թէ սպանելոյն ամուսինը, այրիացեալ զեղեցիկ Փատանձեմը իրեն կին առաւ, այս ապացոյց է, որ նա տակաւին ամուսնացած չէր: Մինչդեռ Արշակ Բ. իր թեթեւամտութեան համար կը պարսաւուի, Արշակ Գ. (350—367), որ Կոստաս կայսեր († 350) նշանածն Ողոմպիա իրեն ամուսին ստացաւ (ընդ մէջ 351—355 տարիներուն), իբրեւ ազնիւ անձ, զոտ պատերազմող եւ քաղաքագէտ կը ներբողուի:

Ընդունելով, թէ Փաւստոսի յիշած դէպքը պատահած է 24 Յունիս 311, կ'ուներանք յարգի վկայութիւն մը, թէ Յովհաննէս Մկրտչի Մննդեան տօնը արդէն Գ. դարու սկիզբը տօնելի էր Հայոց Եկեղեցւոյ մէջ:

Ազաթանդեղոս կը յիշէ Յովհաննէս Մկրտչի ուրիշ տօն մ'ալ, որ կը տօնուէր Սահմի Դին ի Տարօն: Կը գրէ, թէ Գրիգոր Լուսաւորիչ «իրբեւ դարձեալ գայր ի կողմանց Յունաց (այսինքն Կեսարիայէն), բարձեալ բերէր ընդ իւր նշխարս ինչ յոսկերացն մեծի մարգարէին երանեալ Մկրտչին Յովհաննու եւ սուրբ վկայն Քրիստոսի զԱթանազիոսին» (ա՛յսպէս): «Եւ իբրեւ եկին հասին յանդիման մեհնացն մօտ ի գետն Եփրատ», շինեց հոն վկայարան մը «եւ զսուրբսն ի հանգիստ փոխեցին» (էջ 603—605): «Եւ հրամայեաց կատարել անդ ամ յամէ ի տեղու՞ ժողովել ամենեցուն ի յիշատակ սրբոցն, որ եօթն էր Սահմի ամսոյ. զի խնդութեամբ ժողովեալ զօր տօնին խմբեցին» (607): Այս անկապ, կրկնութեամբ ծանրաբեռնուած նախագատութեան միտքն է. Գրիգոր յանուն Յովհաննու մա-

տուս մը կը շինէ, բերուած նշխարները (մասամբ) կը զետեղէ հոն եւ կը հրամայէ, որ Սահմի Դին տարուէ տարի սուրբերու յիշատակը տօնախմբուի: Ակնարկութիւններ ունի այս մասին նաեւ Փաւստոս. նա գիտէ, թէ «սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց հանդերձ թագաւորօք... պատուել զտեղիսն (ի Տարօն)... կատարել անդ ամի ամի եւթն անգամ (°)» զյիշատակ սրբոցն. «առաւել եւս ի մեծի Մարգարէարան Մատրանն Յովհաննու. այնպէս եւ յԱռաքելարանս Տեառն աշակերտացն, այնպէս եւ ի վկայարանս Մարտիրոսացն ամի ամի ժողովեալք՝ զօր տօնին յիշատակի նոցա վարուցն զործոց կենաց քաջութեան խմբեալ ցնծային» (Գ. 14): Դանիէլ Ասորի ունէր իր հոգաբարձութեան տակ ի Տարօն «նոյնպէս եւ ի ներքոյ քան զնա (զԱշտիշատ) զՄարգարէանցն Յովհաննու. նոյնպէս մօտ ի տուն Տեառն զՀանդիստ Առաքելոցն» (Գ. 14): Փառէն էր «ի դաւառէն Տարօնոյ, ի մեծէ Մարգարէանցէն Յովհաննու, որ էր նախ շինեալ [տուն աղօթից եւ խնդրուածոց] ի հանգիստ սրբոցն. զի տեղին այն նմա էր հաւատացեալ» (Գ. 16):

«Մարգարէարան մատուոն Յովհաննու» եւ «Մեծ Մարգարէանոցն Յովհաննու» (երկուսը կրկնուած) Ազաթանդեղեայ «Վկայարանն» է. իսկ «Առաքելարանն տեառնաշակերտացն», այն է «Հանդիստ Առաքելոցն» եւ «Վկայարանն Մարտիրոսաց» Ազաթանդեղոս անյիշատակ թողուցած է: Չենք կրնար ըսել, թէ այս երեք եկեղեցի-մատուոներն ալ Ս. Գրիգոր շինած է, բայց կ'երեւայ թէ Ս. Գրիգորէն է Յովհաննու Մարգարէարան-մատուոն (τό προφητεϊον μαρτύριον) բայց անհաւատալի կը թուի այն թէ «սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց հանդերձ թագաւորօք... կատարել անդ ամի ամի եւթն անգամ» սրբոցն յիշատակը: Այս տեղ ընդգրկի աղաւաղում կը նկատեմ եւ կ'առաջարկեմ կարգալ «ամի ամի յեւթն սահմի ամսոյ», ինչպէս ունի Ազաթանդեղոս:

Ազաթանդեղոսի տեղեկութեանց մէջ ժամանակագրական անհամաձայնութիւն մը աչքի կը զարնէ: Եթէ Գրիգոր Կեսարիայէն դարձին նախ Տարօն հանդիպեցաւ եւ հոն հաստատեց Յովհաննու տօնը Սահմի Դին եւ ապա հասաւ Բագաւան եւ հոն ալ Ս. Յովհաննու տօնը հռչակեց Նաւազարդ 1ին, հարկ է ենթադրել, թէ Ս. Գրիգոր իբր

10 ամիս զեղեբեցաւ Տարօն: Բայց պատմութեան ընթացքը թոյլ չի տար այսքան երկար դադարում մը:

Եթէ Նաւասարդ 1ին կարգուած տօնն էր յուլիանեան Յունիս 24ին տօնուած Յովհաննու Մննդը, Սահմի 7 պիտի համապատասխանէր Յուլիանեան տոմարի Աւգոստոս 29ին, երբ կաթողիկէ աշխարհը արեւելք եւ արեւմուտք կը տօնէր Յովհաննու Գլխատման տօնը: Այսպէս Երուսաղէմեան ծառայող կը նշանակէ «Աւգոստոս Թ. Տօն Յովհաննու Մկրտչին որ է Տօն Գլխատման Յովհաննու»: Այսպէս կը տօնէին մինչեւ Թ. դար նաեւ Յայնները, որոնց ազդեցութեան ենթակայ էին Ասորիք:

Ազաթանդեղոս կը գրէ թէ Գրիգոր Տարօնէն մեկնելու ժամանակ «երարձ նշխարս անտի կէս մի ի սրբոցն, զի եւ յայլ տեղիս հաստատեցէ զյիշատակս նոցա» (608): Տեսանք Բագաւանի մէջ Յովհաննու անուով եկեղեցի: Կար Ս. Յովհաննու Մկրտչի վանք մ'ալ ի Կարրի, «յԱրագածու ոտին» սր կը յիշուի է. դարու առաջին տասնեակին¹⁰:

Յայտնաւորքը Արտաւազդ-Շիրազի գրոցը պատմելէ ետքը, թէ Շիրազ Մասիսի վրայ «երկաթի կապանօք կայ ի բանդի եւ երկու շուն՝ սեւ եւ սպիտակ (ցորեկ եւ վիշեր) յար լիզուն զկապանս նորա», կ'աւելցընէ. «Յայս յաւելուած արարին քուրմքն ժամանակին եւ ասացին, թէ Երկաթի կապանքն տարեմտին ի մագն եկած լինի. եւ թէ կարի եւ արտաքս ելանէ եւ աւերէ զաշխարհ: Ապա օրէնք դրին յազապս Հայոց, թէ ամենայն արուեստաւոր միանգամ աւելի բարեւ զարուեստն ի մուսն Նաւասարդի՝ յաւելուած կապանացն Արտաւազդոյ. դարբինն զսալն հարկանէ կռանան, հանդերձաւործն զիւրն. սոյնպէս եւ այլ ամենայն արուեստաւորք: Չայն իսախանելոյ ազապս սուրբն Գրիգոր Լուսաւորիչ կարգեաց յայտնաւոր տօնել սուրբ մարգարէին եւ մկրտչին Յովհաննու» գտօնն¹²:

Մովսէս Խորենացւոյ վկայութեամբ այս հեթանոսական սովորութիւնը պայտօթիւն

ունէր զեռ Թ. դարուն. կը գրէ. «Այլ ի ձայնէ կռանարկութեան դարբնաց զօրանան, ասեն, կապանքն: վասն որոյ եւ առ մերով իսկ ժամանակաւ՝ բազումք ի դարբնաց զհետ երթալով առասպելին, յաւուր միաշարաթևոջ երեցս կամ չորիցս բախեն զսալն, զի զօրացին, ասեն, չղթայքն Արտաւազդոյ (Բ. 61):

Այս մէկն է այն հեթանոսական սովորութիւններէն, որոնք վերապրած են մինչև մեր օրերը քրիստոնէայ աշխարհին մէջ, թէ Արեւելք եւ թէ Արեւմուտք: Մեզի համար հոս ուշագրաւ է Արտաւազդ-Շիրազի գրոցին կցուած վերջարանը, ուր կռանարկութեան այս սովորութիւնը կը պատմուի տարեւորուի եւ Յովհ. Մկրտչի տօնին կապակցութեամբ: Վասն զի նման անուութիւններ այն հին ժամանակներ կը տեսնուին ուրիշ ազդերու մէջ ալ, դարձեալ ի յարարութեան Արեւադարձի հանդէսներու¹³ եւ Յովհաննէս Մկրտչի Մննդեան տօնին (Յունիս 24): Եւ արդէն նկատած են Ս. Հարք, թէ նախաքրիստոնէական այդ տօնը իր աստեղադիտական բնոյթով ունի նմանութիւն Յովհաննէս Մկրտչի անձնաւորութեան հետ: Ս. Աւգոստինոս կը գրէ. «Զի խոնարհեցի մարգն՝ ճնեալ լինի այսօր Յովհաննէս», յորում սկսանին նուազել աւուրք. զի բարձրացի Աստուած, յայնմ աւուր ճնեալ լինի Քրիստոս, յորում սկսանին աճել աւուրք» (ձառ ՄԶԹ): Հին տօնին այժմ մնացած սովորութիւններէն են. Լուսացում զիշեր ժամանակ. կրակապառութիւն. բախում հրանիւններու: Առաջինը կը պարսաւէ Ս. Աւգոստինոս իբրեւ հեթանոսական աւելորդապաշտութիւն: Դուրանդոս կը յիշէ, թէ այս տօնին մարդիկ եւ տղաք կը ժողվեն ոսկորներ եւ այլ աղբիւններ եւ կը վառեն, որպէս զի ճուրջ ծառանայ օդին մէջ: Առած ջահեր կը շրջին անդաստաններ: Անիւ կը հոլովեն: Կրակապառութիւնը զեռ մնացած է Գերմանիա եւ Հունդարիա, հին ժամանակներ բոցերու շուրջ կը պարէին, այժմ կրակի վրայէն զոյգ զոյգ կը ցատկեն: Կան տեղեր, ուր սկուտեղներ կը կտորտեն, այսինքն զանոնք յարգով պատած եւ կրակ տուած կը նետեն օդ կամ կը զլորցնեն լեռներէն: Կը շինեն յարգամարդ եւ կ'այրեն:

¹⁰ Anton Baumstark, Festbrevier und Kirchenjahr der syrischen Jakobiten. Eine liturgiegeschichtliche Vorarbeit. Paderborn 1910, էջ 274—275: ¹¹ Գրք Թղթոց, էջ 111: ¹² Տաշեան, Յուլիան, էջ 25ա:

¹³ Այս սովորութիւնը կար նաեւ Պարսից քով, համա. Հ. Ն. Ակինեան, Մատենադարանի Հետազոտութիւններ, Գ. (1938) 209—210:

Հայոց կոանարկուսիւնն եւ նման գործերէն ճարտարութիւնները, այս կարգի սովորութիւններէն են: Ունէին նաեւ Հայք կրակավառութիւն, որ այժմ Տեառնընդառաջի ասօնին կը կատարուի: Պետարարկա 1330ին երբ կը գտնուէր Կէօլը, տեսաւ, թէ ինչպէս Յունիս 24ի զիշերը գերման կանայք եւ աղջիկներ Հոննոս կ'երթային եւ իրենց բազուկները կը լուսային գետին մէջ¹⁴: Այս սովորութիւնը կը յիշեցնէ Համբարձման տօնի հայ ժողովրդական նմանօրինակ սովորոյթները: Առանց տարակուսի ծիսահանութեան սովորութիւնը կ'ակնարկէ հին երգին մնացորդը.

Ո՛ր տայր ինձ զձուիս ծխանի
եւ դառաւուն նաւասարգի,
Զվազելն եղանց
եւ զվա(ր)դել եղջերուաց.
Մեք փող հարուաբ
եւ (դ)թմբկի հարկանէաք¹⁵:

Հ. Ն. ԱԿԵՆԵԱՆ

ՆՈՐ ԿՏՈՎԵՐԸՆԻ ԳՐՔԵՐՈՒ ԿԵՐԳԸ ՀՈՅՈՑ ՔՈՎ

(Շարունակութիւն):

11. Անհատականներու կողմանէ կազմուած ցուցակներուն մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի է Անանիա Շիրակացոյ «Թիւք որչափութեան տանց Հին եւ Նոր Կտակարանաց» աշխատասիրութիւնը: Հ. Պ. Ֆէրճաթեան²⁸ շատ գեղեցիկ կերպով կը համեմատէ այս ցուցակը Նիկեիոսի Պատրիարքի (806—816) ընծայուած տնաչափական (stichometrie) ցուցակին հետ, եւ կը յանդի այն եղբայրացութեան, թէ Շիրակացոյ այն Նիկեիոսի օգտուած են հասարակաց աղբիւրէ մը: Մենք նկատի առնելով զրուածքիս միայն Նոր Կտակարանի ցանկը, ամէն բանով համաձայն կը գտնենք զայն Ձօհրայի ցանկին հետ: Շիրակացոյ այս ցուցակին մէջ Յայտնութեան գրքի ներկայութիւնը միայն կասկածելի է, զոր յետա-

գոյ գրչագիրներէն ներմուծում կը համարինք: Տնահամարներու ընդհանուր գումարը՝ ԱՓՇՂԱ. (= 18591) եթէ հաստատուն տուեալ ընդունելու ըլլանք, մեզ չեն գոհացնելու ո՛չ Հ. Պ. Ֆէրճաթեանի հրատարակած ցուցակին տնահամարներու թիւերը եւ ո՛չ Պրոֆ. Ա. Արրահամեանի քննական հրատարակութիւնը²⁹: Հ. Ֆէրճաթեանի յառաջ բերած օրինակին մէջ տնահամարներու գումարն է փոխանակ սղասուած 18591ի՝ 18584, իսկ Պրոֆ. Արրահամեանի քով 18698: Հ. Ֆէրճաթեանի հաշիւին մէջ կայ անուշագրութեան պակաս մը, որով նա «Կաթողիկէթ թուխաք է.» խորագիր-պարբերութեան է թուանշանը իրբեւ տնաչափ աստիճանով՝ ներմուծած է հաշիւին մէջ, որով 18584 + 7 = 18591 թիւը կը հանէ: Այս եօթը թիւի տարբերութիւնը հաւասարելու համար կ'առաջարկենք Փիլիմոնի թղթին ԽԱ. ըւղղել էջմիածնի Թ. 154 (Կարենեան) ձեռագրի համաձայն ԽԸ. ի: Այս փոքր սրբագրութեամբ կը ճշդուի ամբողջ համագումարը եւ կ'ունենանք իրապէս ԱՓՇՂԱ. (= 18591):

ՆՈՐԻՆ (Անանիա Շիրակացոյ) ԹԻԻՓ ՈՐՁԱ-
ՓՈՒԹԵԱՆՑ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՅ

ԱԿԵՆԵԱՆՑՆ Դ:

| | |
|----------------|-----|
| Մտածողութիւնը | ՍՈ: |
| Մարկոսի | ՌՈ: |
| Ղուկասու | ՍՊ: |
| Յովհաննու | ՍԵ: |
| Գործք Առաքելոց | ՍՊ: |

ԿԱՌՈՂԻԿԵՔ ԹՈՒՂԹՔ Է:

| | | |
|--------------------|-------|---------------------|
| Յակոբու թղթին | տունք | Յ: |
| Պետրոսի Ա. թղթին | " | Յ (Ժ) ³⁰ |
| " Բ. թղթին | " | Մ: |
| Յովհաննու Ա. թղթին | " | ՄԿ: |
| " Բ. թղթին | " | ՆԶ: |
| " Գ. թղթին | " | ԼԵ: |
| Յուդայի թղթին | " | ԿԸ: |

[Յայտնութեան Յովհաննու Ն]
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԹՈՒՂԹՔ ԴԺ (ԺԳ):

| | | |
|---------------------|-------|------|
| Հոովմայեցոց թղթին | տունք | ՋԾ: |
| Կորնթացոց Ա. թղթին | " | ՊԽԲ: |
| Երկրորդ թղթին | " | Ո: |
| Գաղատացոց թղթին | " | ՅԺԲ: |
| Եփեսացոց թղթին | " | ՅԺԲ: |
| Փիլիպեցոց թղթին | " | Մ: |
| Կողոսացոց թղթին | " | Յ: |
| Թեսաղոնիկեցոց թղթին | " | ՅԺԲ: |

²⁹ Շիրակացոյ Մատենագրութիւնը: Երևան 1944, էջ 257—259:
³⁰ Փակագծի մէջ առնուածները Պրոֆ. Արրահամեանի հրատարակութեան են:

¹⁴ Հմտ. Heuser, Volkstümliche Feste und volkstümliche Gebräuche: Wetzler und Welte's Kirchenlexikon, 2. Aufl. IV (Freiburg in B. 1886) էջ 148—149:
¹⁵ Գրքոց Մագիստրոսի թղթերը. հրատ. Կ. Կոստանեանց, Աղեքաանդրապոլ, 1910, էջ 87:
²⁸ Անանիա Շիրակացոյ անտիպ էջերէն. Հանդէս Ամսօրեաց, 1908, էջ 20:

| | | |
|-------------------|-------|----------|
| Նորին Բ. թղթին | տունք | ձԾ: |
| Երրայեցոց | " | ՁԾ: |
| Տիմոթեայ Ա. թղթին | " | ՄԻ: |
| Նորին Բ. թղթին | " | ձԶ: |
| Տիմոթի թղթին | " | ՂԶ: (ՂԳ) |
| Փիլիմոնի թղթին | " | ԽԸ: |

Համանդամայն Նորոց Կտակարանաց տունք այս են՝ ԱՓՇՂԱ:

Պրոֆ. Արրահամեանի ցուցակը, զոր նա Շիրակացոյ վաւերական օրինակը կը համարի, մեր համոզումով՝ խանգարուած է: Այս կը տեսնուի Անանիա Շիրակացոյ ցուցակին վերջաւորութեանէն. «Համանդամայն Նորոց Կտակարանաց տունք այս են ԱՓՇՂԱ»: Բոլոր ձեռագիրներու մէջ անփոփոխ պահուած է այս թիւը. թէեւ տունքը հաշուին մէջ տարբերութիւն ունին: Նոյն իսկ դասագրքերու մէջ մուտ գտած³¹:

Անոնք, որ փոփոխութիւն մուծած են բնագրի մէջ, չհակասելու համար այդ թուին, աշխատած են միւս գրքերու տնահամարներու թիւը նուազեցնել: Ասոր մէջ իրապէս դասական օրինակը կը ներկայացնէ Ա. Արրահամեանի բնագիրը, ուր Պետրոսի Ա. թղթին տնաչափերը զոհ են դացած Յայտնութեան. որովհետեւ մինչ Պետրոսի Բ. թուղթը որ առաջին թղթի ծաւալին կէսն է, ունի «տունք Մ», իսկ Ա. թուղթը կը ստանայ միայն «տունք Ժ»: Այս խորհրդածութիւններէն կը հետեւի թէ Անանիա Շիրակացոյ բնագրին մէջ սկզբնաբար չկար Յայտնութիւնը համաձայն էջմիածնի Թիւ 154 (Կարենեան) ձեռագրին³². ապա անցած է ան առանց տնահամարի, ինչպէս մեր Մատենագրարանի Թիւ 30³³, որուն վրայէն կը հրատարակէ Հ. Պ. Ֆէրճաթեան, իսկ առմենափերջը յատկացուած են տնահամարներ, ի հաշիւ միւս տնահամարներուն, ինչպէս ունին ՀԱՍՌ Մատենագրարանի Թիւ 2180 եւ 699 ձեռագիրները:

12. ԺԱ. դարու ցուցակագիրներէն ծանօթ է Գեորգ վարդապետ «Կաղն» կոչեցեալ: Մեծ Հ. Ն. Ակինեան իր ընտելական աղնուութեամբն մեր ուշագրութիւնը հրատարակեց այս ցուցակին վրայ եւ տրամադրեց մեզ այս մասին իր հաւաքած նիւթերը, որուն համար մասնաւոր շնորհակալութիւն

կը պարտիմ Մեծ. Հօր: էջմիածնի ձեռագրատան Թիւ 1320 ձեռագիրը ունի այս խորագիրը. «Գեորգայ Մեծի գիտնականի Կաղն կոչեցելոյ յաղագս շարակարգութեան ԺԳ. թղթոցն Պաւղոսի առաքելոյ³⁴»: Այս գրութիւնը դժբախտաբար ամբողջութեամբ չունինք մեր առջեւ, բայց կարողացանք գտնել ուրիշ կարեւոր աղբիւր մը, որ յայնօրէն օգտագործած է Գեորգայ այս Մեկնութիւնը: Այս աղբիւրն է Արասայ օրդի Գրիգորի Պատճառաց գիրքը, որուն պիտի անդրադառնանք քիչ յետոյ: Գրիգոր ունի այսպիսի յիշատակութիւն մը. «Դարձեալ տեսցուք եւ զկարգ թղթոցն թէ որպէս գրեցան, զոր ցուցանէ Գեորգ Կաղն կոչեցեալ» (Ձեռ. 47, թղ. 162ա): Այս խորագրին յաջորդող պարբերութիւնը չենք գիտեր թէ Գեորգ Կաղն բնագրէն է հանուած կամ թէ քաղուածոյք մըն է միայն անկէ: Գեորգայ վերոյիշեալ ձեռագրէն Հ. Ն. Ակինեանի նշանակած մի քանի տողերու համեմատութիւնը Գրիգորի բնագրին հետ, շատ հաւանական կ'ընծայէ այն կարծիքը, թէ այդ պարբերութիւնը իսկական Գեորգի գործն ըլլայ: Գեորգ այս ցուցակը կազմած է թղթերու գրութեան ժամանակագրական կարգովը: Կոչումները, որոնք կը գործածուին դասաւորումին համար, առնուած են ինքնին թղթերու մէջ եղած վկայութիւններէն:

ԳԵՈՐԳ ԿԱՂՆ ԿԱՐԳՆ Է

| | |
|----------------------|---------------|
| Առ. Թեսաղոնիկեցիս Ա. | Առ. Տիմոս |
| " Կորնթացիս Ա. | " Գաղատացիս |
| " Բ. | " Եփեսացիս |
| " Գաղատացիս | " Փիլիմոն |
| " Երրայեցիս | " Կողոսացիս |
| " Տիմոթեայ Ա. | " Փիլիպեցիս |
| " Տիմոթեայ Ա. | " Տիմոթեայ Բ. |

Գեորգ Կաղն թէպէտ կը լսէ իր աղբիւրը, բայց յայտնի է, թէ Ոսկերեանի Հոովմայեցոց թղթին մեկնութիւնն է այն (տե՛ս Թ. 10): Գեորգի ցուցակը Ոսկերեանէն կը տարբերի անով միայն, որ Ոսկերեան Երրայեցոց թղթէն յառաջ կը կարգէ Տիմոթեայի Ա. թուղթը:

13. Միսիքար Այրիվանցի իր ժամանակագրական պատմութեան մէջ (էջ 33)³⁵ ունի Նոր Կտակարանի գրքերու ցուցակ մը:

³¹ Գիրք Հարցմանց Գրիգորի Տաթևացոյ: Կ. Պոլիս 1729, էջ 451. «Եւ Նոր Կտակարանին ամենայն՝ են տունք՝ ԱՓ. ՇՂԱ»: Հմտ. Ժողով Բ. Անտիոքայ Միանդամայն Նորոց Կտակարանաց տունք ԱՓՇՂԱ:
³² Ֆէրճաթեան, անդ, ծանօթ. 16:
³³ Տաշեան, Յուցակ, էջ 174:

³⁴ Հ. Ն. Ակինեան, Պատմութիւն Հայ Մատենագրութեան, անտիպ:
³⁵ Հրատ. Ք. Պատկանեան: Աւելի կանուխ է Մկրտիչ Էմիլի հրատարակութիւնը, Մոսկուա 1860ին, ուր դուրս բողոսած է այս ցանկը «բանդի խառն ի խառն յառաջ բերեալ էին ի մերում գրչագիր օրինակի», էջ 22: